**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3**

**ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/134 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Մեծամոր** **19 հունվարի 2026թ.**

2026թ. հունվարի 19-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաք վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ սննդամթերքի ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/134 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ս. Սարգսյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ, |
| Լ. Մուրադյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ, |
| Վ. Բաղդասարյան՝ | Մեծամորի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության բաժնի գլխավոր մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ս. Սարգսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, Վ. Վարդանյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ**

1. Ընթացակարգը չկայացած հայտարարելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

**1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ**

Հանձնաժողովի քարտուղար Վ. Վարդանյանը Հանձնաժողովի անդամներին տեղեկացրեց, որ Ընթացակարգի շրջանակում 73-րդ և 74-րդ չափաբաժինների մասով

հաղթող (ընտրված) մասնակից ճանաչված «ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՈՌ ԳՐԻԳՈՐԻ» ԱՁ -ն սահմանված ժամկետում՝ ոչ ուշ քան 15.01.2026թ ներառյալ, ներառյալ, գրավոր չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները և վերջիններս ներկայացնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև սահմանված ժամկետում և կարգով eAuction.am համակարգում չի կցել իր կողմից հաստատված պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների համաձայն, Հանձնաժողովը որոշեց.

1. «ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՈՌ ԳՐԻԳՈՐԻ» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

2. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | **Մասնակցի անվանումը** | **Գնահատման արդյունքը** |
|---|---|---|
| 73-րդ և 74-րդ | «ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՈՌ ԳՐԻԳՈՐԻ» ԱՁ | անբավարար |

Հանձնաժողովը որոշեց.

1. «ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՈՌ ԳՐԻԳՈՐԻ» ԱՁ -ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել համապատասխան գործընթաց՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով «ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՈՌ ԳՐԻԳՈՐԻ» ԱՁ-ի հայտերը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել Մեծամոր համայնքի ղեկավարին:

3. Ընթացակարգի 73-րդ և 74-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները:

4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել Ընթացակարգի շրջանակում հրապարակվող հայտարարությունները հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ս. Սարգսյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Լ. Մուրադյան ____________

Վ. Բաղդասարյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Վարդանյան ____________